# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔ
## <<ԱՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՊՄԴ>> ՀՈԱԿ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան,
Գայի փողոց, թիվ 6 շինություն
էլ.փոստ՝ amanukyanmpmd@mail.ru

Ելից-32-

07.10.2022թ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Շահգալդյան,

Տեղեկացնում ենք ,որ Չարենցավան համայնքի <<Արա Մանուկյանի անվան ՄՊՄԴ>> ՀՈԱԿ-ի ֆուտբոլի Մ16տ և Մ18տ հավաքական թիմերը ,ինչպես նաև բասկետբոլի պատանիների Մ16տ և աղջիկների Մ16տ հավաքական թիմերը հաջողությամբ հանդես են եկել Բ խմբի առաջնություններում և նվաճել են իրավունք մասնակցելու ՀՀ ֆուտբոլի Ա խմբի առաջնությանը և ՀՀ բասկետբոլի պատանիների և աղջիկների առաջնություններին ։

Սակայն 2022թ մարզադպրոցի պահպանման ծախսերով նախատեսված գործուղման գումարը չի բավարարում վերը նշված առաջնությունների գործուղման ծախսերը կատարելու համար ։ Տվյալ խաղերը բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար անհրաժեշտ են նաև ֆուտբոլի և բասկետբոլի գնդակներ:

Ուստի խնդրում ենք՝ մարզադպրոցի պահպանման ծախսերի 4221 /ներքին գործուղումներ / սինթետիկ հաշվին հատկացնել 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար /ՀՀ դրամ և 4269/ հատուկ նպատակային այլ նյութեր /սինթետիկ հաշվին 200000 /երկու հարյուր հազար /ՀՀ դրամ:

Կանխավ շնորհակալություն:

Տնօրեն՝ Գ. Մովսիսյան

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ Է «07» 10 2022թ.
Մուտք N 5199 էջը N 04

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

*Հարգել՛ի պարոն Շահգալդյան,*

Չարենցավանի համայնքապետարանի շենքի փոքր նիստերի դահլիճը կահավորելու նպատակով նոր գրասենյակային կահույք՝ թվով 36 աթոռ և սեղաններ ձեռք բերելու համար, առաջարկվում է համայնքի բյուջեից տրամադրել 4,0 մլն. դրամ գումար:

**ԶԵԿՈՒՑՈՂ՝** **Բ. ԲԱԼԲԱԲՅԱՆ**

***10.10.2022թ.***

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ Է «10» 10 2022թ.
Մուտք N 5212 Թերթ N 11

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

*Հարգելի պարոն Շահգալդյան,*

Չարենցավանի համայնքապետարանի շենքի ջեռուցման համակարգի աշխատանքները անխափան ապահովելու նպատակով, անհրաժեշտ է համայնքի բյուջեից տրամադրել 0,9 մլն դրամ գումար, թվով 18 հատ ջեռուցման մարտկոցներ ձեռք բերելու համար:

*ԶԵԿՈՒՑՈՂ՝* *Բ. ԲԱԼԲԱԲՅԱՆ*

*05.10.2022թ.*

05 10 2022
5173 21